ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

կրթության որակի ապահովման բաժին պետ Նարինե Վարդանյանի՝ 2019 թ. մայիսի 16-23-ը Իտալիայի Տուշայի համալսարան կատարած այցի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մայիսի 16-23-ը Եվրոմիության Էրազմուս+ KA 107 ծրագրի շրջանակներում Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը պաշտոնական այցով գործուղվել էր Իտալիայի Տուշայի համալսարան: Պատվիրակության կազմում էին՝ կրթության որակի ապահովման բաժնի պետ Նարինե Վարդանյանը, գիտական քարտուղար Ատոմ Մխիթարյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Սարգսյանը, միջազգային հարաբերությունների բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը, «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանը:

Այցի շրջանակներում Գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը ունեցավ տարատեսակ հանդիպումներ: Մասնավորապես այցի շրջանակներում ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի պետ Նարինե Վարդանյանը հանդիպեց Տուշայի համալսարանի Դիդակտիկ քարտուղարության տնօրեն Կապուանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները Իտալիայում, կրթական ծրագրերը Իտալիայում հավատարմագրելու գործընթացն ու փուլերը, որակի ներբուհական համակարգի կազմակերպչական կողմերը, շահակիցների գոհունակության հարցաշարերի բովանդակային կողմը, դրանց վերլուծության և հետադարձ կապի մեխանիզմները:

Տուշայի համալսարանի որակի ապահովման պատասխանատուն հայկական պատվիրակությանը ներկայացրեց համալսարանի ֆակուլտետների ինքնավերլուծության ներկայացման ձևաչաձերը: Քննարկվեցին դրանց տարածման հետագա ուղիները:

Ն. Վարդանյանը անհատապես հանդիպեց նաև Տուշայի համալսարանի որակի ապահովման ստորաբաժանման վերլուծաբանների հետ, քննարկեց շահակիցների կարծիքի գնահատման, դրանց վերլուծության մեխանիզմները և ընթացակարգերը:

Անհատական հանդիպումներ ենք ունեցել նաև ուսանողների հետ, քննարկել ինստիտուցիոնալ գնահատման գործընթացում նրանց մասնակցության դերի, շահակիցների կարծիքների ուսումնասիրության մեխանիզմների մասին:

Ն. Վարդանյանն այցելել է նաև գրադարան, ծանոթացել ֆոնդերին, հասանելի գրականությանը և ռեսուրսներին:

Պատվիրակության անդամների համար կազմակերպվեց նաև շրջայց Տուշայի համալսարանի տարածքում, ֆակուլտետներում և լաբորատորիաներում:

Նարինե Վարդանյան

ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի պետ,

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

27.05.2019 թ.